

ԱՄՆ դոլար. գործընթացներ և սպասումներ

Սամվել Չափարյան, «Գանձվեն Ֆայնեյշլ» փոխնախագահ

Ամերիկյան դոլարը կվերականգնի իր կորցրած դիրքերը, քանի որ ԱՄՆ տնտեսությունը հզոր է: Այս մասին վերջերս հայտնեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը իր հարցազրույցում Ֆոքս հեռուստաընկերությանը: «Եթե մարդիկ ուշադրություն դարձնեն մեր տնտեսության ներուժին, ապա նրանք կհասկանան թե ինչու եմ ես հավատում դոլարի ամրապնդմանը»՝ նշեց նա: Սպիտակ տան գլուխը հիշեցրեց, որ ԱՄՆ-ում պահպանվում է ցածր սղաճը, ցածր տոկոսադրույթները, ավելանում են աշխատատեղերը, աճում է ԶՆԱ-ն: Նա ընդգծեց, որ «ԱՄՆ իրականացնում է ուժեղ դոլարի քաղաքականություն և կարելու է, որ մնացած աշխարհը իմանա դրա մասին», թեև վերջին շրջանում փաստացիորեն հակառակն է:

Ոմանք Ամերիկայում կարծում են, որ արժեզրկումը հենց այն է, ինչ պետք է ներկայումս Ամերիկային: Այն կխթանի արտահանումը, որը սեպտեմբերին հասավ ռեկորդային 140 մլրդ ԱՄՆ դոլարի: 2007թ. երրորդ եռամսյակում երկրորդ եռամսյակի նկատմամբ առեւտրային դեֆիցիտը կրճատվեց 36 մլրդ ԱՄՆ դոլարով:

Բազմաթիվ խոշոր ընկերությունների շահույթները արդեն մի քանի եռամսյակ շարունակ աճում են ի շնորհիվ վերջիններիս արտերկրյա «դուստրերի» գործունեության: Այս եկամուտները ավելանում են նաև թուլացած դոլարի վերածվելուց: Իրենց կարծիքով Ուոլլսթրիթի գները կբարձրանան՝ ներգավելով արտերկրյա կապիտալ, հատկապես որ ամերիկյան արժեթղթերը դոլարի անկման պարագայում դառնում են ավելի էժան արտերկրյա ներդրողների համար: Այսպիսով, ԱՄՆ արտաքին առևտւային դիսբալանսի ֆինանսավորման խնդիրը էապես կթեթևանա: ԱՄՆ անշարժ գույքի շուկան նույնպես պետք է ներգրավի արտերկրյա ներդրողների: Վերջինիս գները նույնպես էականորեն նվազել են, հատկապես վերահաշվարկված եվրոյի, ենայի, յուանի: Առկա է նաև տուրիզմի բնագավառը: Այն արդեն բարգավաճում է, քանի որ ամերիկացիները գերադասում են հանգստանալ տանը, իսկ արտասահմանցիների համար այստեղ այնքան էժան է, որ ամռանը ԱՄՆ այցելել են ռեկորդային թվով տուրիստներ: Եւ այսպես շարունակ կարելի է բերել օրինակներ:

Ընդհանուր տնտեսագիտական տեսության տեսակնկյունից այս ամենին դժվար է հակաճառել: Սակայն իրականությունում այս ամենը այլ տեսք ունի: Արժեվորումը բերում է միայն կարճաժամկետ արդյունքների: Արտադրողները արագորեն հարմարվում են էժան արտարժույթին և կարճ ժամանակում «ստատուս-բվո անտե»-ն վերականգնվում է: 1970-ականներում ՄԱԶ-ը պնդում էր, որ ֆինանսական ճգնաժամ ապրած երկրների արժույթները ենթարկվել են արժեվորման և դրանով ավելացրել են ուժեղ արտարժույթի ներհոսքը: Այս տեսակի միջոցների հաջողությունը սովորաբար շարունակական չէր եւ ֆինանսական ճգնաժամը անպայման վերադառնում էր:

Ավելին: Զավանաբար ճգնաժամի ամեն մի հաջորդ գալարապտույտը կլինի ավելի խորը, քանի որ յուրաքանչյուր արժեվորում խաթարում է պետության արժույթի նկատմամբ վստահությունը: Կայուն աճը և բարգավաճումը հնարավոր եղավ Ասիայի և Լատինական Ամերիկայի երկրներում միայն վերջին տարիներին՝ տեղական արժույթների կայունության պայմաններում:

ԱՄՆ-ում տնտեսական լճացման ժամանակաշրջանը, որը տեղի ունեցավ 1970-ականներին, զուգորդվեց ԱՄՆ դոլարի թուլության հետ: ԱՄՆ դոլարի այդ ժամանակների փոխարժեքը՝ հաշվի առած սղաճը և առևտրային գործընկերների մասնաբաժինը, մոտ էր ներկայիս մակարդակին: Սակայն արտահանողները խթաններ չստացան, իսկ ֆինանսական շուկաները՝ ներառյալ արժեթղթերի բորսան, փաստացիորեն անշարժ էին:

Իսկ ամերիկյան տնտեսության ներկայիս երկարաժամկետ վերելքը սկսվեց ԱՄՆ դոլարի թռիչքով 1980-1985թթ.: Նույն երևույթը արձանագրվեց 1990-ականների երկրորդ կեսին, երբ ԱՄՆ տնտեսական աճը ուղորդվում էր արժույթի ուժեղացմամբ:

Թույլ դոլարը կրճատում է ԱՄՆ տնտեսության տեսակարար կշիռը աշխարհում: Դրա սկզբից այն Եվրո-

միության տնտեսության նկատմամբ կրճատվեց գրեթե երկու անգամ, ինչը չի կարող չթուլացնել Վաշինգտոնի ազդեցությունը աշխարհում: Ավելին, չկա ոչ մի հրաշալի երեւոյթ այն փաստում, որ արտասահմանցիները էժան գներով ձեռք են բերում ամերիկյան ընկերություններ, անշարժ գույք եւ այլ ակտիվներ: Ի դեպ, վերջիններս նաև այդ ցածր գներով չունեն ձեռքբերումների ձգտում: ԱՄՆ դուլարը թույլ է հենց այն պատճառով, որ ամերիկյան ակտիվները չեն հետաքրքրում արտերկրյա ներդրողներին:

ԱՄՆ դուլարը բնականաբար նաև պահուստային արժույթ է, միջազգային ֆինանսական համակարգի առանցք: Այլ արժույթները դե-ֆակտո երաշխավորվում են տեղական կենտրոնական բանկերի հաշիվներում առկա ԱՄՆ դուլարներով: Երբ արժեզրկվում է ԱՄՆ դուլարը, ավտոմատ կերպով արժեզրկվում են նաև այլ արժույթները՝ ապրանքների, ծառայությունների և ակտիվների նկատմամբ:

Եւ ճշմարտություն է, եթե վերանանք սղաճի պաշտոնական ցուցանիշներից, չկա կասկած, որ ամենուրեք աշխարհում վերջին տասնամյակում փողի գինը զգալիորեն ընկել է: Այս գործընթացի հակառակ կողմն է՝ միջազգային շուկայում ԱՄՆ դուլարով գնանշվող բնական պաշարների գնի աճը: Սա հայտարարվել է ՕՊԵԿ-ի անդամ երկրների վերջին հանդիպմանը, որտեղ նաև բարձրացվել է գները եվրոյի վերափոխելու հարցը:

Վաշինգտոնի կարողությունը՝ աշխարհում լինել գլխավոր ղեկավարող դերակատար, Բուշի նախագահական ժամանակաշրջանից հետո այժմ շատերի մոտ կասկած է հարուցում: Այս կասկածները ունեն դրամական արտահայտություն: ԱՄՆ դուլարը հանդիսանում է ամենաանվտանգ արժույթը՝ համակարգում յուրահատուկ մի նավահանգիստ, որտեղ խարիսխի դերը տանում է ԱՄՆ: Վերափոխելով ակտիվները ոսկու, ներդրողները փորձում են ապահովագրվել վնասներից՝ տվյալ համակարգի փլուզման դեպքում: Ոսկու գները թռիչքածեւ աճեցին մինչեւ 800 ԱՄՆ դուլար մեկ ունցիայի համար, ինչպես դա եղավ Վիետնամից հետո առաջին տարիների ընթացքում եւ ԱՄՆ առաջնորդությունը աշխարհում նույնպես խաթարվեց:

Վաղ է հրաժարվել ԱՄՆ դուլարից, հատկապես այն պարագայում, երբ համաշխարհային տնտեսական և քաղաքական համակարգի կենտրոնում գտնվող ԱՄՆ-ին չկան փոխարինող իրական հավաքողներ: ԱՄՆ դուլարը հավանաբար որոշ ժամանակ հետո կվերադարձնի իր նախկին դիրքերը: Սակայն նրանցից, ով որոշում է ամերիկյան քաղաքականությունը, ցանկալի կլիներ լսել ոչ թե անտարբեր դիտողություններ ԱՄՆ դուլարի թուլացմանը հանգիստ վերաբերվելու համար, այլ տեսնել ավելի մտահոգություն՝ նրա հեղինակության վերականգման համար: